

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 65-րդ հոդվածի 6-րդ կետում «Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի պետական սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները ներդնելու իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում» բառերը փոխարինել «Պետության սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքները՝ կառավարության համաձայնությամբ կարող են ներդրվել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետից հանել վերջին երկու նախադասությունները:

Հոդված 3. Օրենսգրքի 67-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 67. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքն աճուրդով

1. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, բացառությամբ սույն օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, կատարվում է աճուրդով:

2. Աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողի կադաստրային արժեքի 50 տոկոսից, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, ծայրամասային բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 30 տոկոսից:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա:

4. Աճուրդների կազմակերպման և իրականացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենսգրքով և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Հրապարակային սակարկությունների միջոցով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի (դրանց առանձին հատվածների) աճուրդով վաճառքի նկատմամբ չեն կիրառվում «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության դրույթները:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության Հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Հ. Մարգարյան</p>	<p>Առաջարկվում է.</p> <p>Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետի «հիման վրա» բառերից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Աճուրդով վաճառվող հողամասերի նախկին բարեխիղճ վարձակալներն իրենց կողմից վարձակալած հողի աճուրդին մասնակցելու ժամանակ ստանում են նախապատվության իրավունք»:</p> <p>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «գործառնական նշանակությունը» բառերից հետո դնել ստորակետ կետադրական նշանը և նախադասությունը շարունակել հետևյալ բովանդակությամբ. «աճուրդին նախապատվության իրավունքով մասնակցող անձանց տվյալները»:</p> <p>«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «օտարման եղանակները» բառերից հետո դնել ստորակետ կետադրական նշանը և նախադասությունը շարունակել հետևյալ բովանդակությամբ. «աճուրդին նախապատվության իրավունքով մասնակցող անձանց տվյալները»:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Առաջարկությունները չեն ընդունվել՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ և 49-րդ հոդվածների, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 68-րդ հոդվածի 8-րդ մասի, 72-րդ հոդվածի, 78-րդ հոդվածի 7-րդ մասի, 85-րդ, 87-րդ և 96-րդ հոդվածներով սպառիչ կարգավորված են հողամասի նկատմամբ նախապատվության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ հողամասի օգտագործման տրամադրման, ինչպես նաև օտարման ժամանակ նախապատվության իրավունքի հետ կապված հարցերը: Այդ առումով, գտնում ենք, որ նախապատվության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները չեն հանդիսանում ներկայացված նախագծերի կարգավորման առարկան:</p>